


ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան Գրք 10
վեցամսեայ » 5
ԿԱՆԽԻՆ

20
ՍԱՆԴԻՍ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտասահման
Տարեկան Գրք 12
վեցամսեայ » 6
ԿԱՆԽԻՆ

20
ՍԱՆԴԻՍ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԽԵՇՏԱԿԱՆ

Կը հրատարակուի հալար օրերը: Ծա-
նուցման տողը 10 Սանդիս: Երկու թիւ ա-
ռաջ հրատարակուած թերթը 40 Սանդիս:
Հրատարակուած գումարինը եւ չհամար:

Հասցէ
DIRAN PAPA ZIAN
RUE DRAGOMAN N. STEPAN
(BULGARIE) VARNNA

ԱԶԳԱՅԻՆ

— 0 —

ՄԻՆՏԵՐ ԳԱՎԿԱՍՈՐ

Վարնալը պիտի թագըմ գատընլա-
րա սէօյլէրիմիզի աղնաթմադ մագսէ-
տիլէ իշպու պէնտիմըզի թիւրքճէ եաղ-
մաղա մէճպուր օլմուշըղ տըր:

Քիլիսէ (Եկեղեցի) հէփիմիզին տիր:
Օրատա թօբլանան էհալի զէնկին օլտուն
փուգարէ օլտուն, Ալլահըն ինտինտէ հէփ
միւսավի տիր: Օրատա «Պէն պուրտա
տուրաճաղըմ... սէն շուրտա տուրա-
ճաղըն...» տէյու գավկա նիլա չը-
գարմադ հէմ այըպ տըր հէմտէ իշի-
տէնէրին կիւնահա կիրմէսին: սէպէ-
պիլէթ վէրմէք տիր: Օրատա, վերնա-
տունտա «Պու մինտէր պէնիմ գայնա-
նամըն նինէսինըն նինէսինտէն պանա
միրաս գալմըղ տըր» տէյիպ քնտի-
սինտէն էվվէլ ժամա կէլիշ տուրմուշ
օլան գատըն իլէ գավկայա թուլթուշ-
մաղա ասլա քիմնէնին հագգը եօգ տըր:
Էսկի զէմանլարտա, քիլիսէյէ պիր ի-
րատ օլտուն տէյու պէօյլէ պիր ատէթ

գօնմուշ իսէ տէ, օ վաղըթլար, ժամ-
տա շիմտիքի գատար թապադ կէզտիլ-
մէք ատէթ օլմադըլընտան, զէնկին փա-
միլեալարտա պիրէր մըգտա բարա
ալընըր ըմը: Շիմտի իսէ, ժամա կիւնէն
կէրէք փուգարա վէ կէրէք զէնկին հէր
քէս քէնտի գուտիլէթինէ կ.օլ: թա-
պալարա վէ գանձանալարա բարա
պրագմադտա օլտուլընտան, եէր սաթ-
մադ ատէթի գալգմըղ տըր: Սնհադ,
պիր թագըմ եէրլի գատընլարմըլ,
էլլէրինտէ պիրէր հէօճէթլէրի վար կի-
պի տիւնեանըն սօնունա գատար վեր-
նատունտա պիրէր եէր սահիպի օլմադ
խիւլասընտա պուլունուպ, հաթտա կէ-
չէն հինգշաթթի Ս. Վարդանանց կիւ-
նիւ, եէրլի պիր գատըն, «պու նէրտի-
վէնին պաշը պէ: իմ պէօյլէք նինէմ-
տէն պանա գալմըղ տըր, արթըճաճըգ
կէչմէյին» տէյէրէք նէրտիվէն պաշը-
նը պիլէ վապթ էտիպ, կէչիպ տէօնմ-
յէ էնկէլ օլմաղա չըգըղտըլընտան, ու-
փադ պիր բաթըրտը օլմուշ աըր:

Թէքրար սէօյլէրիզ քի, պէօյլէ շէյ-
լէր այըպ տըր: Ումարըղ քի պիր տահա
վերնատունտա մինտէր գավկապը չըգ-
մայաճադ տըր: ագսի հալինտէ պու իտ-
տատա պուլընան գատընլալըն իսիմ-

լէրինի նէշը իթէյէ մէծպուր օլաճա-
ղըզ: Շունու տախի զիքը իթմէյէ
ունութմայալըմ քի՝ պուրանըն եէրլի
խաթունլարընտան պաղըաը քէնտի միւ-
լէթտաշլարընտան, եանի մուհաճիր հայ-
լարտան պիրիսի տօղուրուր, էվլէնիր
վէ եախօտ վէֆաթ իտէր իտէ՝ «Սիլլէր-
տէն պիրի տօղուրմուշ, սիլլէրտէն պի-
րի էվլէնմիշ, սիլլէրտէն պիրի էօլմիւշ»
տէյուպ պիր ֆարգ գօյմագտա տըրլար:
կէօյա քէնտիլէրի պաշդա պիր միլլէթէ
մէնտուպ օլմուշ օլսունլար: Պու տա պիր
պէօյիւք այըպ տըր: Հայ լուսաւորչակտն
իսմինի թաշըեանըն հէփիսի պիր ֆա-
միլեա, պիր միլլէթ տիր, օրատա «սիլ-
լէրտէնին, պիլլէրտէն»ին իշի եօգ տըր:

Բարեկենդանի առթիւ տեղւոյս
Թաղ խորհրդոյ կողմէ բաւական թուով
տնանկ աղքատաց նիւթական նպաստ
բաշխուած է:

ՄԱՐԴԱՍԻՐԸ

Անցեալները պատուական հանդէ-
սիդ մէջ ցաւելով կարգացինք, թէ ծա-
նօթ մարդասէր անձնաւորութիւն մը,
մէկ քանի վաշձկան ստահակներու ա-
նարգանքներէն վշտացած, գաղբեցու-
ցած է իր ողորմասիրութիւնը: Սակայն
այսօր կուգամ աւետել թէ նոյն անձը
անյիշաչարութեան ալ բարի օրինակ
մը տալով, իր մարդասիրական պարտա-
կանութիւնը վերստին կատարել սկսած է:

Ահա եղելութիւնը -

Բարեկենդանի շաբաթ օրն էր:

Կայծակի արագութեամբ ամբողջ
Վառնայի մէջ տարածուած էր այն լու-
րը թէ՝ Աղքատախնամը ստիպուած էր
իր նպաստները առժամայ կերպով դադ-
րեցնել: Ժամը 4ին ատենները 100է ա-

ւելի աւելը հացի կարօտ աղքատներու
կարաւան մը հաւաքուած էր նոյն ծա-
նօթ անձնաւորութեան վաճառատանը
առջև, որ քանիցս կարեւոր նպաստներ
ըրած էր իրենց: Այս խեղճերուն ամեն-
քըն ալ կարգաւ, տխուր գէմքով վաճա-
ռատունէն ներս կը մտնէին ու զուարթ
գէմքով դուրս կուգային, օրհնելով այն
ձեռքը, որ զիրենք նորէն կը մխիթա-
ւոր:

Ինչ կ'ուղեն ըսեն, խղճահար ու
մարդասէր սիրտը չի կրնար անտարբեր
մնալ կամ չի լսելու զարնել աղբոսն այն
աղքատին, որուն բերնով իսկ անա-
գուած է նախատուած ըլլայ:

Ահա այս է ճշմարիտ առաքինու-
թիւնը:

Ս

«Շարժում»ի չորեքշաբթի օրուան
թիւին մէջ Շումլա՝ն ելած թղթակցու-
թիւն մը, տեղւոյն քահանային նկատու-
մամբ կարգ մը աննպաստ աշխարհու-
թիւններ ընելէն ետքը, կ'աւելցնէ
թէ, «նթէ այսպէս շաշունակութի, ժո-
ղովուրդը կը սպառնայ իր զաւակներով
օտար եկեղեցիներ յանախել»:

Մեզ կը թուի թէ այս լուրը կա-
տարելապէս սուս ու սխալ է: Մենք,
իւր վաղածանօթ Շումլուցիներուն բա-
րուց ու վաշուց, կրնանք բացէ ի բաց
յայտարարել թէ, եթէ քահանայ մը
կայ որ իր կրօնական պարտախնու-
թեանց մէջ կը թերանայ, Շումլաի ժո-
ղովուրդը հոգեւոր իշխանութեան ձեռ-
քով կրնայ այդ մարդը՝ զգաստացնել,
բայց երբէք չի զիջանիր չուրանալ իր
զաւաւոր եկեղեցին ու աղքութիւնը:

Վստահօրէն կըսենք թէ՝ այս ամ-
բաստանութիւնը Ս. Ք. թղթակցին խե-
ղապատակին մէջ միայն ծնունդ առած
կրնայ ըլլալ:

Այս առթիւ չի մոռնանք ըսել թէ «Շարժում»-ի մէջ սկսած են երևիլ կարգ մը աշխարհաքաղաքացիական ու հակակրօնական գաղափարներ, որոնք ցաւալի նորութիւն մը ըլլալէ ուրիշ առաւելութիւն մը չունին:

ՁԵՆՈՅՑ — Իբր ստորագրութիւն գործածուած կեղծ անուններով կամ բուն անուններու միմիայն սկզբնատառերովը միջի զրկուած գրութիւններուն կտրկորութիւն չենք տար, եթէ մինչեւ իսկ անոնց պարունակութիւնները խիստ կարեոր ալ ըլլան: Երբ նամակագիր մը իր ստորագրութիւնը կը ծածկէ կամ կը կեղծէ, գրածին ճշգրտութիւնը կասկածի տակ ձգած կ'ըլլայ: Արդեօք կըրցանք հասկցնել:

ՆՈՐ ԳԻՐՔ ԾՆՆՆՈՑ


Գիրք ծննդեան ինքնակոչ բութականախտայից, գեմոլիատ սօսիալիստից, անարշիսթից և ոչ անարշիսթից. կեդրոնական գանձարանից և ապակեղչոնական պիւռօյից, կողմնակալ և անկողմնակալ մինչև դուռը ց'կռնակն բաց թերթից ու թուղթից, կոչից ու պոչից, թուղթիկ թերթից և ուռեցիկ խօսքից. սիսգեմադիկական և մաթեմաթիկական նոր ըէթրմից եայլն, եայլն:

Եւ յաւուրն այնոսիկ վաղին վառայ քաղաքի, հալածեաց և արտաքսեաց զբօրթուղայեանն, որ նէֆէսն առեալ ի Ֆրանսական Մարսիլեա քաղաքն, ծնաւ զԱրմենիա, Արմենիա ծնաւ զՀնչակ, Հընչակ ծնաւ զՀայաստան, զուկանն անկթարմենականի, անունը կայ ինք չի կայի. Հայաստան ծնաւ զԼառմենի, Լառմենի ծնաւ զՀայք, Հայք ծնաւ զԴրօշակ, որ զուգաւորեալ ընդ Հնչակի ծնան զՄիութիւն, Միութիւն ծնաւ

զՄարտ և զեղբայրն նորա Ալֆարականըն, Ալֆարականն ծնաւ զՆոր կեանք, հանդերձ Փարոսիւ և ֆէնէուիւ. և որդիքն Հայկայ (ժողովուրդ) գերեալ, արտածեալ ու գաղթացեալ 'ի նոր բարելոնեւանայ, ծնաւ զԻրաւունք, Իրաւունք ծնաւ զՀայելի, Հայելի ծնաւ զԿատակ, Կատակ ծնաւ զՏաւրոս, Տաւրոս ծնաւ զՇարժում, շահընլալութեամբ Արդի, մաքոյի, սաւաշչի, սաւաշչուռի, իսասայի, ամերիկայի, բէռզալի և խպինաթօյի, այլովքն հանդերձ:

Պօ՛՛՛՛ մ . . . Վարդանանց հանդէսն 'ի Ֆիլիպէ:

ԲՈԺՈԺԻԿ



ԱՂԶԿԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԸ ՄԷՁ

Փոքր աղջիկ մը իւր վարժուհոյն առջև յօտնկայս սիրեմ բայը կը խոնարհէր բարձրաձայն: Նոյն պահուն վարժարանի պատուհանին առջիւէն անցնող մարդ մը փոքրիկ օրիորդին ձայնը առնելով կ'ըսէ. — Աշխարհ . . . վերջը եկած է, սըփոնց նայեցէք, թիզ մը աղջկան հիմա՛յունէ սիրելը կը սովորեցունեն կոր:

ԴՍՏԱՐԱՆԻ ՄԷՁ

Նախագահը—Անուննիդ ի՞նչ է.

Ամբաստանեալը, որ գիւղացի մ'էր —Տէր նախագահ՝ արդէն անունս ձեզ ծանօթ է, քանի որ բուն անունովս հոս կանչուած եմ:

— Բանի՞ տարու էք.

— Ծնողքս գիտեն.

— Ուր ծնած էք.

— Դժբաղդաբար չեմ գիտեր. պէտք է մօրս հարցունեմ որ գի՛ւղը թէ՛ անտառը ծնած է զիս:



ԽԱՐՈՒԱԾ ԱԿՆՑԻՆ

(ԻՐԱԿԱՆ ԳԵՊԵ Ի Կ. ՊՈԼԻՍ)

ԳԼՈՒԽ ԺԶ.

ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ՔՈՂԱՔԸ

Վերջապէս, ամիսներէ ի վեր Աստիւր աղաի սպասած վարդապետի դիմացի կիրակին եկաւ. հասաւ:

Նոյն օրը փեսայ և կնքահայր հագուած սգուած, տաներէցին գալստեան կը սպասէին: Իրիկուան ժամը 10ին (ը.թ.) քահանան եկաւ, որուն հետ ժամը 11 ու կէսին Գուրու-չէշմէն մեկնելիք շոգենաւով Պոյաճի գիւղ հասան: Պատրիկ նաւամատոյցին վրայ զանոնք դիմաւորեց և Միհրան աղաի տունը առաջնորդեց: Օրիորդ Բուրմինէ հարսանեկան հագուստով դիմաւորեց զանոնք, տիկին Միհրան ալ սանդուղին գլխէն: Օրիորդ Սրբուհի մէջտեղ չի կար:

Գիշերուան ժամը 1ին Պատրիկի առաջարկութեամբ նշանի ու հալաւի օրհնութեան արարողութիւնը կատարուեցաւ:

Չի մոռնանք ըսել թէ փեսան իր խօսեցելոյն համար ադամանդեայ ապարանջան մը բերած էր, զոր Մաթոս աղա յանձնեց տիկին Միհրանի: Արարողութեան աւարտումէն ետքը, Պատրիկի կարգադրութեամբ օղիին ափսէն բերուեցաւ ու մէկ ժամու չափ անով զուարճանալէ ետքը, ճաշի իջան: Այն ոտենուան սովորութեան համեմատ, հարսն ու փեսայ նոյն գիշերը մեկտեղ սեղան չի նստեցան, փեսան սեղան իջաւ իսկ հարսը իր սենեակը ճաշեց:

Պատրիկ, որ ճաշի ատեն Մաթոս աղաին քովը նստած էր, միշտ գինի կը հըրամցունէր անոր, այնպէս որ, կնքահայրը սկսաւ կամաց կամաց քաղաքի ճաշ, այն միջոցին մէկ բանի երգեցիկ տղայք, որոնք յատկապէս բերել տրուած էին, սկսան երգել: Պատրիկ առանց մէկու մը յայտնի ը-

նելու՝ գրպանէն պզտիկ թղթի ծրար մը հանեց, ու անոր պարունակած փոշին գինիի լեցուն գաւաթին մէջ խառնելով՝ Մաթոս աղային հրամցուց որ ամբողջութեամբ պարպեց: Տասը վայրկեան անցնելէ ետքը կընքահայր աղան սկսաւ արեւոյցի եղ խօսիլ. մերթ քաւքի երգի մը մէկ տողը կարտասանէր ու մերթ սաղմոսէն տուն մը, եւ. վերջապէս չի կրնալով ինքզինքը բռնել, նստած տեղը ըսկսաւ մտաւել: Պատրիկ ու սպասաւորներէն մին անոր թեւերը մտած, վերի յարկը պարտէղին վրայ նայող պզտիկ սենեակին մէջ պատրաստուած անկողինը տարին պառկեցուցին: Ճարպիկ գրագիրը, սենեկէն դուրս եկած ատենը, կըսէր ինքն իրեն. «մինչեւ վաղուան ժամը 4ը արթննալիք չունի, կըրնանք անարգել մեր գործին նայիլ»:

— Է՛, ի՞նչ ըրիր նայինք, Պատրիկ աղա, հարցուց Աստիւր աղան, մեր Մաթոս աղան կերէկի կիպի գինովցաւ, հէ՞:

— Հոգ չէ, քիչ մը թող հանգստանայ, պտակի հանգէսին տակաւին չորս հինգ ժամ ունինք, հարկաւ մինչեւ այն ատեն կ'արթննայ, այնպէս չէ՞, տէր Հայր:

— Ճշմարիտ է. Աստուած անփորձ պահեցէ. ասանկ բաներ ամեն ուրեք կը պատահին, թէ ի հարսանիսս և թէ ի կնուներս. մեր կնքահայր աղայն ուրախութենէն քիչ մը աւելի փախցուց, այն ալ հոգ չէ, ներեալ է իսկ:

— Ծառայ եիմ բարձրելոյն տէր հայր. ուր՝ հոխնի հախին բաժնեւոր կու խօրաթիս:

— Աստուած օրհնեսցէ, մեր պարտքն է միշտ և հանապազ ճշմարտութիւնը խոստովանիլ:

Ճաշին վրայէն, ըստ սովորութեան սուրճ առնելէ ետքը Պատրիկի հրամանաւ գինիով մրգեղէն սկսաւ մեծարուիլ. Պատրիկ Աստիւր աղաին քովը նստած, զայն չափէ աւելի չի գինովցունելու համար անոր գաւաթները ինքն իւ ձեռքովը պէտք եղածին չափ կը լեցնէր. երգեցէկ տղայք ուրեւորեալ կ'երգէին: Աստիւր աղա չափազանց զուարթ էր:

Ժամը Յին (ը. Թ.) Պատրիկի ակնարկու-
թեամբը քահանան հրամայեց պսակի պատ-
րաստուիլ եւ ըստ սովորութեան ձեռք պա-
ցունել տալ հարսին ու փեսին :

Միհրան աղայենց աղագական երկու դե-
ռատի տիկիններ ներս բերին հարսը, որ
Պատրիկի հրահանգովը, այն ատեն Պոլսոյ
համար հին իսկ գաւառներու մէջ գեռ 'ի
գործադրութեան եղող սովորութեան մը հա-
մեմատ, գլխէն մինչեւ ոտքը անդուսէ (ճան-
փէս) քողքով մը ծածկուած ըլլալով, երեսը
չէր տեսնուէր, իսկ թէլբէշէն այդ քողքին
վրայէն կախած էին : (Տեղն է ըսել թէ ա-
տեն մը այդ խորհրդաւոր քողքին շնորհիւ կ'ալ-
սապատող և խիստ տգեղ աղջիկներ կը օա-
խուին եղեր, իրենց տեղը աղջիկտեսի ատեն
գեղանի աղջիկներ ցոյց արուելով . բայց պը-
ստկը կատարուելէ ետքը ալ ամեն բան լը-
մնցած ու փեսաները «խըսմէքնիս այս է»
ըսելով կը համազուին եղեր, այս փեսայ հա-
մովելու գործին մէջ հարսի-հոյր կոչուած
տիկինները մեծ գեր կը կատարեն եղեր :

Հարս ու փեսին ձեռք-պագի պարտա-
կանութիւնը կատարելէ ետքը, պսակի հան-
դէսը սկսու . և որովհետեւ Մաթոս աղան
Արիմելքեան բուն մը կը քաշէր, քահանա-
յին առաջարկութեամբը Պատրիկ փոխանոր-
դաբար կնքահայր եղաւ :

Պսակը աւարտելէ ետքը, «հարսը քիչ
մը անհանգստութիւն ունի» ըսելով՝ գայն
վերի յարկը տարին :

Ամառ գիշեր ըլլալուն, առաւօտը սկսեր
էր ծագիլ . այս միջոցին օդին ափսէն բե-
րուեցաւ ու մէկ ժամու չափ զբօսնելէ ետքը
առաւօտեան նախաճաշին համար սեղան ի-
ջան : Այս անգամ Պատրիկ Աստիւր աղան
բովը նստելով՝ յարմար առիթ մը գտաւ
գրպանի փոշիէն նախապէս որոշեալ բանա-
կութեամբ քիչ մը բան խառնել անոր գի-
նի գաւաթին մէջ :

Տասը վայրկեանէն Աստիւր աղա ալ Մա-
թոսին պէս մրաբել սկսելով, գայն վերի
յարկի մեծ սենեակը տարին պառկեցուցին :

Երկուշաբթի օրուան ժամը 4ին Մաթոս

աղա արթնցաւ, բայց անհանգիստ էր, ուս-
տի ուղեց մեկնիլ և երթալ 'ի Գուրու-չէշմէ :
Պատրիկ անոր ընկերացաւ և երկուքն ալ
շողենաւ նստելով հեռացան :

Իրիկուան ճաշի զանգակը կը զարնուէր .
Աստիւր աղա տիկին Սրբուհիի հետ ուրախ
զուարթ ճաշասրահ կիջնէր :

• •

Օրիորդ Բուրմինէ որ հարսնիքին գի-
շերը փեսան դիմաւորելէ ետքը հագուստ-
ները օրիորդ Սրբուհիի յանձներ ու ինքը
գիւղին մէջ բարեկամ ընտանիքի մը տունը
գացեր էր, նոյն շաբաթը հոն անցունելէ
ետքը վերադարձաւ ծնողացը քով :

Վիրակի օրը Պատրիկ և Մաթոս ի միա-
սին գացին Պոլսոյ գիւղ :

Անցնին բերանը բաց մնաց երբ տե-
սաւ որ Սրբուհին Բուրմինէի տեղը եկած էր .
ու կամաց մը մօտենալով Աստիւրի՝ ըսաւ :

— Է՛յ Աստիւր աղա, ես օրի չէի՞
ըսեր ուր ըսթընգօյլցիները տուգառա կանին,
մարդ կու խաբին . հըմայեկս ի՞նչ տի ըսիս :

— Ի՞նչ տի ըսիմ . Ագամը խաբուելէն
սըղրա՝ անոր թողանը թողը հայտէ՝ հայտէ
կու խաբուի : Անճախ, սա ի՞նչատէ տ'անիմ
քեզի ուր՝ աս հարստէս, գլխէն բունէ մին-
չուկ ոտքերը մէմնիւն ու մէսրուր եիմ . Աբ-
րահամ նահապետին պէս Փօքիս իրեն հը-
մար փէտա կանիմ :

Նոյն կիրակի օրը մինչեւ իրիկուն ա-
մենքն ալ լաւ մը զբօսնելէ ետքը Աստիւր ա-
ղա իր տիկնոջը հետ Գուրու-չէշմէ հաստա-
տուեցաւ :

Հարսնիքէն երեք շաբաթ ետքը կիրա-
կի օր մը Աստիւր աղա իր տիկնոջը հետ այ-
ցելութիւն տուաւ Միհրան աղայի բնակա-
րանը : Տիկին Սրբուհի խօսակցութեան տաք-
ցած պահուն գրպանէն 105 ոսկինոց մուր-
հակը հանեց պատողտեց ըսելով :

— Այս գումարով կ'ուզենք որ Բուր-
մինէի օժիտը պատրաստուի :

Աստուածածնի դիմացի կիրակին Բուր-

մինչ ալ Միւսիւ Լեոնին հետ ամուսնացաւ :
Այս երկու ընտանիքները երջանկութեամբ
ժամանակ անցուցին :

Ատեն անցնելէ ետքը, օր մը Պատրիկ
քմծիծաղով մը Աստիւր աղայի հարցուց թէ .

— Արդեօք Ահնցին կը խաբուի :

Ահնցին պատասխանեց :

— Մատտէին մէջ քեզի պէս բաշան
տոտիկովը կըլլեցնող կատու շանտուղաներ
ըլլան իսէ, ասօր ալ կու խաբուի փաղն ալ :

ՎԵՐՉ

ԲԱՐԵԼՈՆԱԿԱՆ ՊԱՐԱՅԱՆԴԵՍ

ՏԵՂԵԿԱԴԻՐ ԲՈԺՈԺԻԿԵԱՆ

Չարաճճին Բոժոժիկ, մէկ քանի նոր փե-
սաներու պէս, թատրոնի «կարտարօք» են
ձեռք մը դիմակաւորի հագուստ ճարել յա-
ջողելով, բարեկենդանի կիրակի գիշերը տե-
ղի ունեցած պարահանդէսին ներկայ կը գըտ-
նուի ու հետեւալ տեսարաններուն ահանա-
տես կըլլայ :

«Ժամը 9ն է : Փառաւորապէս բայց ա-
ներեւութապէս բազմած եմ կեդրոնի օթեա-
կի վարագոյրին ծալքերուն մէջ : Դիմակաւոր
զոյգեր, կիւլապտան—պուհուրտանի, ումանք
ալ լէհէն—երպրըխներու պէս հետզհետէ կը
սկսին հասնիլ : Ասոնց մէջ կը գտնուին պա-
րոններ, որոնք մտից տոմսակ չառնելու հա-
մար կնկան հագուստ և դիմակ կը կրեն,
բայց դրանք մէջ օձիքնին ձեռք տալով կը
խայտառակուին : Կան նաեւ առանց տաւաի
եկող ծակ—գրպան պարոններ, որոնք սրա-
հին մէջ առանձինն պտտող դիմակաւորուհի-
ներուն մօտեցած, ու թւերնին խալանօղի
խուլքի պէս կըրցուցած, անոնց կը ներկա-
յացնեն ու աղերսական ձայնով «անկաճէն
մատմաղէլ» կըսեն, բայց մասնապէս օրիորդ-

ները ոչ թէ ահանջնին այլ քիթերնին ան-
գամ չեն երեքցունէր, և պարոնները առանց
վհատելու անդաստան կը պտըտին «անկա-
ժէ. . . անկաժէ. . . պուռպուլ :

Վերջապէս ժամը 10ը կը դարնէ : Նը-
ւադախոււմը պարելու նշանը կուտայ . բազ-
մութիւնը այն աստիճանի հասած է, որ ե-
րերալու, քայլ մը առնելու իսկ տեղ չկայ .
ամեն զոյգ կեցած տեղը ցատկելու ստիպուած
ըլլալով, երբեմն քոփերնին իրենց պէս ցատ-
կատող զոյգէ մը կռնկի ուժգին հարուած մը
կը ստանան, որ շիտակը, հարիւր ֆրանքի
չ'ուտուիր :

Ժամը 12ին Բարելոնական խառնա-
կութեան վարագոյրն է որ կը բացուի . գա-
րեջուրի ու գօնեաքին շոգիովը շատերուն գը-
լուիւր լեցուած, ըրածնին թողածնին չեն
գիտեր : Այլ կը սկսին ճանցուիլ տիկիներ-
նին տունը ձգող և շանթօղներու հետ սի-
րաբանող ամուսնացեալ մերադնեայներ, ինչ-
պէս նաեւ ամուսնացեալ և այրաթող կիներ,
որոնք քուլիսներուն մէջ ստարականներու
հետ ՏԵԱՆՈՒԽԻՆԵՐ կը սարքեն :

Ուրի մտքէն կ'անցնէր թէ պիտի գըտ-
նուին եղեր շէնքով շնորհքով համբաւ ունե-
ցող հայուհիներ, որոնք կարգ մը շանթօղ-
ներու պէս՝ ամեն ազգէ խառն երիտասար-
դաց կողմէ հրամցուած գարեջուրին գաւաթ-
ներուն պիտի խոնարհէին և. . . և. . . և. . . :

Հոն կը տեսնուին քսակնին կորսնցնող
շնորհքով արդիաղներ և օղիէն խմուած գը-
րողներ : Ի մի բան, ամեն գասակարգ իր-
ներկայացուցիչն ունի հոն, ազնուականէն ըս-
կսեալ մինչև խապախի կուտ ծախողը :

Տեսնելու բան է այն ազնուական մէկ
քանի երիտասարդները, որոնք վիզաւի կըլ-
լան ցորեկը իրենց ոտքին կոշիկները ներկող
լՕՍՏՈՒՐԱՆԻՆԵՐՈՒ հետ : Հոն տեսնուեցաւ
նաեւ ԿՐԻՍԵ՛ մականուանեալն պարոն Կարա-
պետ, որ մէյտան—օյնիական խորխա մը
հագած և առանց գէմքը ծածկելու, պղտիկ
հրէուհի մը թւին կըլծնած, «Աբէռէղ, մե-
ռէղ պոյնէղ» ըսելով ոչ միայն քատրիլին կը
մասնակցէր, այլ՝ ՏԻՌԻԺԵ կընէր :

Յանկարծ սրահին զրանը մէջէն «Քա-
Հուտի... Հուտի» պոռալու ձայն մը լը-
ռեցաւ, երիտասարդ մայր մը, իր վեց ամ-
սու զաւակը ամուսնոյն բով ձգած, եզրօրը
հետ պարահանդէս եկած ըլլալով, տղեկը
արթնցեր ու սկսեր էր լալ։ Տայրն ալ զայն
պարահանդէս բերած, մայրը կը փնտռէր
որպէս զի տղուն ժողմ մը կաթ տայ։

Այս եղական պարահանդէսին շուրջ ա-
ւելի կը փսեմացներ օթեակի մը մէջ պեւ-
ճօրէն բազմող պարկեշտութեան տիպար
ճննոց տուտու մը, որ յաճախակի իրին հը-
րակցուած գարեջուրի և գծնաթրի գաւաթ-
ները ի մի ուժով կը պարպէր և պող կա-
տակներ կընէր։ Վերջապէս գլուխը ա՛յն տա-


տիճան տաքցաւ որ, իր Պաքանալ թագուհի
աղջիկը բառակենայ հինի—Մուլէնի մը հետ
հան ձգելով, կառք մը գրուեցաւ ու առաջ-
նորդուեցաւ իր հանգստավայրը, մէկ բանի
դիմակաւորներու հետեղութեամբ։

ՎԵՐՋԵՆ ՏԵՍԱՐԱՆ

ԹԱՊԼՈ ՎԻՎԱՆ (Կենդանի պատկեր)

ԱՌԱՆՈՍԵՐ սկսաւ ծագիլ։ Գիշերը մու-
թին մէջ սրտերնին բացող կարգ մը դիմակա-
ւորուհիք երեսնին ալ բացին ու սկսան շա-
րունակել գիշերուան այսպանելի պատկերները,
մինչև որ խանութպանին կողմէ արտաքսու-
եցան հրաշտփաւ խայտառակութեամբ։

Մ Ե Ն Ա Ի Պ Ա Յ Ի Ր Ա Ս Տ Ո Ի Թ Ե Ա Մ Բ



ԱՇԽԱՐՀԻ ԶԻՋԱՆԸ ՈՒԹՍՈՒՆ ՕՐԳԻԱՆ ՄԷՋ

Ժիւլվերնի տիւղերա հռչակ տոյն դիտական վէպին թատերագութիւնը, որ բաւական ժա-
մանակէ ի վեր փորձի զրուած էր ՎԷՍԷԼՈ հայ թատերախմբին կողմէ, այս գիշեր պի-
տի ներկայացուի։ Սոյն խաղին համար պէտք եղած հանդերձանք և տեսարանք նորէն պատրաս-
տուեալն։ Թատերասէր հանդիսականը այս գիշեր հաճոյալի ժամանց մը պիտի ունենայ։


ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱՏՈՒՆ

Ա. Զարպհանէլեան

ՎԱՌՆԱ

Կը վաճառէ Պոլիսի, Թիֆլիսի եւ Վիեննայի մէջ հրատարակուած հայերէն գաղտնական եւ պատմական գիրքեր, գնումն եւ վաճառումն ամեն տեսակ նամակագրոյմերու. նաեւ գաղտնական պիտոյքներ: Քաղաքներէ եկած յանձնարարութիւնք վաճառել կը կատարուին

4



ԳՆԻՇԱԿ

Ա. ՊԱՌԱՅԻ

կամ Զուարճայի Բաղդադցի
ընտանեկան

Երկսեւ ամէն հասակի ընթերցողաց զբօսալի ժամանցներ տուող սոյն գիրքը կը ծախուի մէկ ֆրանքի, թղթատարի ծախքով դիմել մեր խմբագրութեան:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐ ԿՈՒԹԻՒՆ

ԵՐԳԱՐԱՆ

ՄԱՆԿԱՊԱՐՏԵՁԻ

ԿԱՄ

ԴԱՍԱԳԻՐԲ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

Ի ՊԵՏՍ

ՓՈԲԵՐԵՅ ՏՂԱՅՈՅ

Այս երգարանը, իր տեսակին մէջ առաջինն է որ լոյս կը տեսնէ հայերէն լեզուով, կը պարունակէ մանկական գուարճալի երգեր ու քանի մը ոտանաւոր առակներ եւ կրնայ երախայնեւորն ծառայել նաեւ իբր ընթերցանութեան գիրք որուն պարունակութիւնը երօտեցուցիչ եւ հրահանգիչ է միանգամայն անոնց համար:

Թուղթը ընտիր է, տպագրութիւնը՝ մաքուր եւ կազմը վայելուչ:

Գին 80 ՄԱՆԹԻՄ

Կեդրոն. Վառնա, Արեւելեան տպարան,
2րդ. թաղ, թիւ 1104:

Տ Պ Ա Ր Ա Ն

ՀԱՅԵԼԻ

ՀԱՆԳԻՍԻ

Վալդիկեանական Տպագրութիւն

ԱՅՅԵՏՈՄՍԻ

100 հատը 2 ֆր. կը տպագրուի եւ աւար տուփին մէջ կը գտնուի Այցետոմսի գործածութեան հրահանգը պարունակող տետրածր, որուն կողքին վրայ այցետոմսին տիրոջանունը տպագրուած պիտի ըլլայ: Գիմը խմբագրութեան: Քաղաքներէ ըլլալիք յանձնարարութեան թղթատարի ծախք 30 սանդիմ յանձնարարողին վրայ է: Գրամի փոխարէն Պուլկարական 5, 10 եւ 15 սանդիմաց նամակագրոյմ կ'ընդունուի: Կանխիկ:

ԻՐԲԵՅԻՆ ՖԷՆՏԻ

ԳԱՐԸՅԸ ԵՒՆՏԻ

Գըլ կէճէլէրինէ մախսուս զայէթ կիւլլենճի լէ էյլէնճէլի իշպու գոմէտի 32 սանդիմէտէն իպարէթ օլուպ, հրուֆաթը էրմէնիճէ լէ լիսանը թիւրքճէ օլարապ Վարնատա թիւթիւնճիւ տիւքքեանլարընտա 30 սանթիմ ֆիաթլէ սաթըլմագտա տըր: Թաշրալարտան իսթէյէնլէր հալընըզ 30 սանթիմլիք բոսթա բուլը զիրտէ մուհարրէր նաւըմա կէօնտէրմէլի տիրլէր,

Մ. ԽԱԶԻԿԵԱՆ, 2 ՆՃԻ Ուշաթ, 1104

Վ. Ա. Ռ. Ն. Ա.

Պուստան պէոյլէ սաիր էյլէնճէլի լէ ֆախալլի գոմէտիլէր տախի լէյալէրլէյ նէլը օհունաճաղը պէյան օլունըր:

Отговоренъ редакторъ: Н. Драгулев

Печатница „Взаимность“—Варна